Լոտ 1. ՀՀ Մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ գյուղ Ջորաղբյուր Ջերմոցների փողոց 1-ին նրբանցք թիվ 1 ջերմոց հասցեում գտնվող անշարժ գույք:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21062023-07-0003 վկայականի *«Գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը»* բաժնի, գրանցման համար հիմք է հանդիսացել՝ Անշարժ գույքի տարաժամկետ վճարումով առուվաճառքի պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր՝ 16.06.2023թ., թիվ 6553:

Համաձայն նույն վկայականի *«Գրանցված իրավունքի սուբյեկտ(ներ)»* բաժնի, նշված անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ին:

Համաձայն նույն վկայականի *«Հողամասի բնութագրերը»* բաժնում արտացոլված տվյալների, կադաստրային ծածկագիրը՝ 07-042-0326-0061, մակերեսի չափը (հա)՝ 1.543, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական, Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, վարելահող, Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Համաձայն նույն վկայականի *«Շինությունների բնութագրերը»* բաժնում արտացոլված տվյալների՝ 1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	07-042-0326-0061-001	Ջերմոց	14362.5 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն նույն վկայականի *«Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ»* բաժնում արտացոլված տվյալների՝ 1,543 հա գյուղատնտեսական նշանակության հողամաս, որից 1,4424 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, 0,1006 հա գյուղատնտեսական - վարելահող:

Վերոգրյալ անշարժ գույքը և այդ գույքում առկա /մոնտաժված/ ստորև նշված ողջ սարքավորումները հանդիսանում են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում /իրավահաջորդն է Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի/ գրավադրված գույք: Նշված հասցեի անշարժ գույքում մոնտաժված, տեղակայված /համալրված/ Ջերմոցային տնտեսության կազմում ներառված ջերմոցային տնտեսության /ջերմոցի/ աշխատանքների կատարման ապահովման և իրականացման համար անհրաժեշտ ավտոմատ կառավարման (ավտոմատացված կաթիլային, ոռոգման համակարգ, ջեռուցման, հովացման և օդափոխության ավտոմատացված համակարգ) հետևյալ գրավի առարկա հանդիսացող սարքավորումները՝ համակարգերը.

	Ստորաբաժանում	**Անվանում**	**Տարեթիվ**	**Քանակ**
1	Ջեռուցման համակարգ	Ջեռուցման համակարգի խառնիչային փական, Sub manifold, supply, with 3 half mixing groups	2013	1
2		Օդակարգավորման համակարգի բաշխիչ վահանակ, 2+3, Climate control panel section 2+3	2013	1
3		Օդակարգավորման համակարգի բաշխիչ վահանակ, 1+4, Climate control panel section 1+4,	2013	1
4		Ջեռուցման համակարգի խառնիչային փական, Sub manifold greenhouse, return, with 3 half mixing groups	2013	1

5		Օդակարգավորման համակարգի անձրևային ցուցիչ, Rainsensor	2013	1
6		Օդակարգավորման համակարգի արտաքին ջերմաստիճանի ցուցիչ, Outside temperature	2013	1
7		Օդակարգավորման համակարգի քամու ուղղության ցուցիչ, Wind direction	2013	1
8		Օդակարգավորման համակարգի քամու արագության ցուցիչ, Wind speed	2013	1
9		Օդակարգավորման համակարգի արևային ճառագայթման տվյալների ցուցիչ, Linear light measurement	2013	1
10		Օդակարգավորման համակարգի բաշխիչ վահանակ, Climate control panel section 5	2013	1
11		Օդակարգավորման համակարգի ծրագրային վահանակ, Privaonnext Panel	2013	1
12		Ջեռուցման համակարգի առանձնացված տեղամասային տաքացուցիչ, Heather make thermos air, type UH-10 complete	2013	1
13		Ջեռուցման համակարգի ջրի զտող և փափկեցնող սարք, Water softening system kit	2013	1
14		Ռոգման համակարգի ածխաթթու գազի գազամատակարարման սարք, CO2 fan, type D3SL250305422 50 Hz, 3.0 KW, 400 V, inclusive control cabinet	2013	1
15		Ջեռուցման համակարգի ընդարձակման սարք, Expansion controller make Sotex, type PLE-EcoFlex 8.900 complete with heavy duty pump, 0.55 KW, piping 11/4”	2013	1
16		Ջեռուցման համակարգի ջրի մակարդակի կարգավորիչ, Patial flow filter make Sotex, type SDF6, complete unit	2013	1
17		Ջեռուցման համակարգի խառնիչային փական, main manifold room, supply and return, 5 mixing groups	2013	1
18		Ջեռուցման համակարգի գլխավոր կաթսայի կարգավորման վահանակ, mainpower panel 125 A	2013	1
19		Ջեռուցման համակարգի ընդհանուր պոմպերի կառավարման վահանակ, Heatpump panel	2013	1
20		Ռոգման համակարգի մետաղական տարողություն 12 խմ, RAL6005	2013	1
21		Ջեռուցման համակարգի ընդհանուր ջերմային պահեստային բաք, Heat storage tank 183 delivered as kit	2013	1

22		Կենտրոնական ջեռուցման կաթսա ջերմոցի համար, Boiler make F&H Crone type CLW 60 Gost, capacity 3000 KW	2013	1
23		Ջեռուցման համակարգի ունիվերսալ բոցամուղ, Cas/oil combination, burner make Zantingh, type TR 1.5 ND P G/O	2013	1
24		Ոռոգման համակարգ՝ կոմպլեկտ, թվով 2 հատ 80տ տարողություններով	2013	կոմպլեկտ
25		Հակամիջատային ցանցերի կոմպլեկտ	2013	կոմպլեկտ
26		Ավտոմատ վարագուրման համակարգ	2013	կոմպլեկտ
27		Ավտոմատ էկրանավորման համակարգ	2013	կոմպլեկտ
28		Ավտոմատ կառավարվող շերտավոր դարպասներ	2013	3
29	Կոնստրուկցիա	Ջերմոցի մետաղական կախովի կոնստրուկցիաներ, Metal pendant rows in a greenhouse compartment	2013	202
30	Սայլակներ	Հեղուկացիր	2013	1

ՀՀ Մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ գյուղ Ձորաղբյուր Ջերմոցների փողոց 1-ին նրբանցք թիվ 1 ջերմոց հասցեում գտնվող անշարժ գույքի տեղադրությունն ու դիրքը՝ միջին, տրանսպորտային մատչելիությունը՝ ասֆալտապատ /միջին/, առկա է մեքենաների կայանման հնարավորություն, հողամասի մակերեսը՝ 15430քմ, ճակատային եզրագիծը՝ երկրորդական փողոցի հետ, կառուցապատման չափորոշիչները՝ լավ, թեքությունը՝ հարթ: Շինության կառուցվածքը՝ չժանգոտվող մետաղական կոնստրուկցիա, ապակենման նյութեր, շինության կառուցման տարեթիվը՝ 2015թ., ընդհանուր տեխնիկական վիճակը՝ միջինից բարձր, առաստաղի բարձրությունը՝ 5.75 մ, արտաքին պատերը՝ ապակենման նյութերով: Հիմնական շինության ներքին ընդհանուր մակերեսը՝ 14362.5 քմ:

Շինությունը միահարկ է, արտաքին դուռը՝ մետաղական: Սանհանգույցի հատակը՝ սալիկապատ, պատերը՝ մետաղապլաստե, ընդհանուր վիճակը՝ միջին:

Նշված ողջ գույքը հիդրոպոնիկ ջերմոցային տնտեսություն է՝ համալրված ավտոմատ կառավարման (ավտոմատացված կաթիլային, ոռոգման համակարգ, ջեռուցման, հովացման և օդափոխության ավտոմատացված համակարգ):

Առկա են կիրառված սահմանափակումներ, այդ թվում «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի /իրավահաջորդն է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ- ի/ գրանցված գրավի իրավունքը:

Լոտ 1-ի մեկնարկային գինն է **727,173,910** ՀՀ դրամ:

Ծանոթություն - Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Ա. Գևորգյանի 08.09.2025թ. թիվ 04/27,1/66 33-2025 գրության, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Մ. Շահինյանի 23.09.2025թ. գրության և «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ, իրացման տնօրեն Լ. Օհանեսյանի 03.09.2025թ. թիվ ԼՕ-4021 գրության, «ԷԿՈԼԵՆԴ» ՍՊԸ-ն նշված ընկերություններում բաժանորդ չի հանդիսանում:

Հրապարակային սակարկություններով վաճառքի ներկայացված անշարժ գույքի սահմանափակումների մասին տեղեկատվությունը՝ ելնելով տեղեկատվության ծավալից,

հայտարարությունում չի ներառվում, սակայն այն ամբողջ ծավալով կտրամադրվի նման տեղեկատվություն հայցող շահագրգիռ անձին:

Ծանոթություն. «ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն, *նոր սեփականատիրոջն է անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփականատիրոջ չկատարած պարտավորությունը կամ գերավճարի իրավունքը:*

Ծանոթություն. **ԳՈՒՅՔԱՀԱՐԿ** - ՀՀ հարկային օրենսգրքում 29.08.2026թ. կատարված փոփոխությունների համաձայն, անհրաժեշտ է գնորդի կողմից հարկերը մարված լինելու մասին տեղեկանք ներկայացնել պետական գրանցում իրականացնող մարմնին՝ նոր գնորդի անունով իրավունքի պետական գրանցում կատարելու համար: Այսինքն, գույքի ձեռք բերողը կրում է պարտավորություն՝ աճուրդով գնված գույքի գույքահարկի գծով առկա բոլոր պարտավորությունների կատարման՝ պարտքերի վճարման համար, որից հետո նոր կգրանցվի նոր գնորդի սեփականության իրավունքը աճուրդով ձեռք բերված գույքի նկատմամբ: